




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Thompson's
Nightingale

891.99

Q-99

1926


21.99

L-99

6 NOV 2017

ՀՈՒՐԲԱՆՅԱՆ

ՈՒՂԵԿՑԻ
ՅԵՐԳԵՐ



ԹԻՖԼԻՍ
1926

219)

19.06.2013

1185 VIIA

9/109/



22935-59

Тип. «Заря Востока».
Главлит № 1313. Заказ № 77. Тираж 500.

ՆՐԱՆՑ,

ՎՈՐՈՆՔ ԻՄ ՅԵՐԳԵՐԸ

ՅԵՐԿՆԵՅԻՆ

Յեռ մեկն եմ ձեր
հուր որերի պոյետներից,
յերգիչն եմ ձեր
տառապանքի ու խնդության,
մարտիկն եմ ձեր՝
տողեր հյուսած թույն նե-
տերից,
նետվել եմ ձեր
բովր կռվի ու հաղթության:
Քնար չունիմ յերգիս համար,
այլ փող, շեփոր,
յես սրբնթաց մի ազդարար
յերթին թափոր,
բյուր բոլորին բամբ ձայնովն իմ
ահեղակոչ
պռնկում եմ իմ սրտից արի
մի մարտակոչ...

Յերգս նրան, ում կյանքն ու
մահն
իրենք չի,
ու՛մ յերթը մարտ, ով դիրք մտած
չի նահանջի,
ու՛մ նահանջն իսկ մի արշավ ե
լենինական,

ու՛մ ջանքը վողջ—անցյալի դեմ
պայթողական:

Գիտեմ՝ նորից թմբուկները
պիտի թնդան,
փողը փչի, ու սրտերը
պիտի խնդան.
— Ընկերներ, վո՞նց չ'ողջունեմ
այգը ձեր նոր,
վո՞նց չ'ընչեմ բազմաբարձու
ծայնով հզոր.

Արի կա՛մք ձեզ,
հուրն ընկածներ,
հրե կա՛մք ձեզ:

Մի նոր կյա՛նք ձեզ,
բյուր զրկվածներ,
արդար կյա՛նք ձեզ:

Հաղթ վողջո՛ւյն ձեզ,
հուսացողներ,
արեվակեզ:

Հաղթությո՛ւն ձեզ,
մարտնչողներ,
ռազմիկներ վես...

Հ Ր Թ Ի Ռ Ն Ե Ր

Արեւի
ալ սիրով
խնդուն
վագում ենք որերում հրի,
զինվել ենք ջանքերով անդուլ՝
դարբնելու
զարթոնքը
նորի:

Ընդվզող
սրտերից
մեր բոց,
շեկացած տենչերից կերտող
վառել ենք հսկա մի դարբնոց,
շաղում ենք
կայծերը
չորս կողմ:

Աշխարհի
փոռնում և
ցավից,
կյանքն հղի յերկունքով վսեմ.
— Ռ՛վ նրան կ'ազատի մահից,

ո՞վ պիտի
նոր ճիչը
լսե:

Ահա մե՛նք
մարտնչող,
հզոր
կռվում ենք,—մեր բաղդն ենք
կռում.
կերտում ենք խնդումը բոսոր
ու վառում
հրթիռներ
հեռվում:

Ցայտում են
լուսերը
կարմիր
աշխարհի յեզերքում խավար,
պայթում և մեր խինդը հրթիռ
լույս կյանքի
դարբնոցից
ալ վառ:

ԻՄ ՍԻՐԵՐԳԸ

Բոլոր տենչերից ավելի
ապրելու տենչն եմ սիրում,
բոլոր յերգերից ավելի
նոր կյանքի յերգն եմ սիրում,
բոլոր կանչերից ավելի
բմբոստի կանչն եմ սիրում,
բոլոր զարկերից ավելի
հաղթողի զարկն եմ սիրում:

Վո՛րքան յերգեր են մեզ հուզել
անլուր վշտում,
վո՛րքան կյանքեր են ընդվզել
տենչը սրտում,
վո՛րքան զարկեր են հրկիզվել
կռվի դաշտում,
ու խինդը մեծ մոտ և արդեն,
մոտ և արդեն:

Զե՛յ, աշխարհի հիմա
մի նոր յերգ և հնչում.
յե՛ւ, պայքարը համառ՝
հաղթանակն և կանչում:
Ում սիրտը հուր և վառ,
ով լի կյանք և տենչում,
թող գա շարքերը մեր,
պողպատ շարքերը մեր:

Թող գան կյանքեր տոչոր
ջանքից տանջանք բամբաժ,
թող գան, փորքան կան հորտ՝
զրկանքը կարգ տեսած,
թող գան հազար համբով՝
սրտում նոր տենչ պահած,
թող գան ազատ կանչով՝
աշխարհին տեր դառած...

Ա.

Բ.

Որերը խենթ հուզում են
 յերգում,
 որերն ընդվզում են յերկնում.
 գուժել և վողջ յերկիրը մեծ
 հողմ,

արթուն և չորս կողմ:

Ամեն վայր — քաղաքներ ու
 գյուղեր,
 ամեն ծայր — դղյակներ ու հյու-
 դեր,
 յեռում և խոր գայրույթը վա-
 ոող,

հատուցման կարոտ:

Լարվել են բյուր մարդիկը
 դժգոհ,
 վառվել և կուռ մարտիկը հուժ-
 կու,

քանդում և շղթաները կապված.
 Հատ մնաց խաբված:

Աշխարհը խուլ տնքում և
 տապով,
 պայքարը բռնկվում և թափով:
 Այնտեղ, ուր կա զրկանք, կա
 միշտ սուր.
 — Վերջ կը տա սարսուռ...

Հնչում և տիտանյան ծայրն
 հզոր,
 կանչում և դեպ արյան դաշտ
 այսոր.
 մայր հողը դեռ անկուշտ և ար-
 յամբ,
 գարկ թմբուկ, բա՛մբ — բա՛մբ:

Ժամերը սպասում են լար-
 ված,
 Ժամերը պատրաստում են հար-
 ված.
 շիկնել և կուտակված մի ցա-
 սում...

— Վաղն ի՞նչ և ասում...

Քաղաքը դեռ լուռ և քնատ,
 քաղաքը լուռ մեռնում և գու-
 նատ.

փռել և ահավոր մի գալիք
 վախ, սպառնալիք:

Փողոցը անվերջ բուն և մրտել,
 դողոցը տան մեջ բուն և գունել.
 գոցել և դուռ, դարպաս մի սոս-
 կում,

մարդն ևլ սո՛ւս հսկում:

Մայթերը՝ ամայի, մթազ-
 նած,

տները՝ ամենի մի զանգված
 նայում են վորպես վորքը մա-
 նուկ.

— Կյանքն ո՞ւր և բանուկ...

Գ.

Հեռուն, մեծ շենքերում մի
 տազնապ.
 յեռում և ձեռքերում գործն

զինում են, ամրացնում բակ,
 շտապ.
 ու սրում ժանիք:

Այլ տեղ ևլ բարրիկադ և
 դիզվում, —

այդտեղ և բարին, վատը կիս-
 վում, —

դարսում են սայլ, աթոռ ու
 զերան

փողոցի բերան:

Մնչում են զինվորները քայ-
 լող,

թանջում են ավտոները փայլող,
 թռչում են հեծյալները կրակ,
 ժի՛ր, կարո՛ւկ, արա՛գ:

Շրջում են շրջիկները ար-
 թուն,

հրճվում են չղջիկները անտուն.

ճնշող և տխուր տեսքը մայթի.
 — Յե՛րբ պիտի պայթի...

I.

ՊԱՌԱՎԸ ԶԱՌԱՄ

Յեվրոպան...

Հինավուրց Յեվրոպան այսոր
 կորցրել և անդորրը իրա,
 մոռցել և որերն իր յերազ...

Հրաշեկ որերի մի չու
 խաշել և աշխարհն հին, ցնորք.
 Մոսկովի խոսքերն և հնչում
 հսկա են զալիքը բորբոր:

Որերը թռչում են հեվրով,
 շաչում են Յեվրոպի զլխին:
 — Են ո՞վ և, վոր ջլուտ ձեռքով
 անցյալը նետում և արխիվ...

Յեվրոպան...

Ալեվոր Յեվրոպան այսոր
 դողում և խելագար տենդում.
 թողնում և վարկ ու փառք,
 խնդում.

Հին գահը փողոսկր ու փոսկյա
 թվում և մահացման մահին.
 աշխարհը սանդուխտ և հսկա, —
 ճնշվածը ճնշողին դահին...

Պալատն իր մի բանտ և հի-
 մա,

Ժանգոտ են միջոցներ բռնի.
 Յեվրոպան տնքում և ահա,
 վորպես մի հայումաշ պոռնիկ...
 Ծլուրվել և, իր մեջքն և թեքել,
 ի՞նչ անի ցավոտ ձերն հիվանդ.
 չկա վոր՝ զալիքից փրկել.

զալիքը —
 զիլյոտին,
 բարրիկադ...

Յեվրոպան համրում և անբուն
 անկումի ժամերը յուր...

ԱՐԹՆԱՅՈՂ ՀՍԿԱՆ

Ամոթխած Արեւելքը նախնի
զգվել է,
հուզվել է
ցոփակյաց Յեւրոպի բարբից:
Արեւելքն արեւ է վառել,
զայրույթից աղեղն է լարել
են զազիր Յեւրոպի հանդեպ:
Դարեւոր հորտերը այն հեզ,
արնավառ սրտերը դաղված
յելել են կյանքի նոր հանդես
կերտելու վայելքը վաղվա:
Յելել են ախոր
Մեծ Արեւելքի
արեւշող կյանքի
արիւններն անհաղթ ու բոսոր:
Յելել են ահա
Մարոկկոն, Չինաստանը տար,
Սիրիան, Հնդկաստանը բարկ,
Թյուրքիան, Պարսկաստանը վառ,
Նեղոսից մինչեւ Խուան-Նե,
Տիգրիսից—Գանգես
վառվել են արեւի հրով
անսասան մասսաները,
միլիոնները վես:
Յեւ նրանց բոլորի հանդեպ,—
ում համար աշխարհն եր դմակ,—
հանել է Արեւելքն արդեն
Սուն-Յաթ-Սեն, Հանդիներ հա-
մառ:
Թալանի, արյան,
դարաբաշ հորտության համար
նոր Արեւելքը
բերել է մուրհակները հին,
մուրհակներն անգեղ ու անցինջ,
վորոնք կազմեց մի մարտիկ
արեւազարմ Իլիչ:
Լուսավոր,
նոր կյանքի համար
Մեծ Արեւելքը
նետել է խնդության մի եիջ,
հաղթությամբ վառվող մի բրբիջ
նետել է Յեւրոպին գառամ,
Արեւելքը թարմ...

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի Ն (Ներբող)

Յերգում եմ հիմա վառվումն
գովբոյ,
սկա՝ Հոկտեմբեր,
բեղ եզույն հեղափոխության:
Յերկար դարերի խու, արյու-
նահեղ
յերկունքից հետո,
միլիոն սրտերի կարմիր, բոցա-
վառ ընդվզումներից
ծնունդ առար դու,
վորպես արեւը հուլիսի, ջերմու-
թյան,
վորպես կերտողը կյանքի, գո-
յության:
Քո զորությունը
փնտռում եմ անվիշտ կյանքը
հաստատող
մեծ ջանքերիդ մեջ.
քո խորությունը
զգացել եմ յես անսանձ, ներք-
նայեռ
հաղթ ընթացքիդ մեջ.
քո մեծությունը
տեսնում եմ կյանքում ամեն ինչ
բանդող
ու նորը կերտող
հզոր կամքիդ մեջ...
Խուռն զգացումներ
վառվում են հիմա իմ վուլկան
կրճքում
քո բռնկումը ամբողջ ծավալով
յեւ վողջ եյությամբ
ապրելու համար.
հրացայտ, գունեղ
պատկերացումներ փնտռում եմ
հիմա՝
քո մեծ հրդեհը գեթ փոքրիկ
կայծի անմար շողերով
ցոլացնելու, փայլ տալու համար.
բոցավառ խոսքեր
փնտռում եմ հիմա՝
քո հրով յետուն իմ ներքին լա-
վան
դեպ դուրս ժայթքելու,
հրթիռ յերգերով շաղ տալու հա-
մար...
Վոտանավորի հանգերն ու
ոխթմը
անկարող են քո վարար ընթաց-
քին չափ ու ձեւ տալու.
գույներ ու նկար
անշունչ են, դժգոյն՝ քո տեսքն
հրաշկ
վերարտադրելու.
գործիք ու նվագ, մետաղ ու հրն-
չուն
թույլ են ու անզոր՝
վես մարտիկներիդ սրտի տրտիք,
սրի շկահումն
յեւ ուռաններիդ թնդյունն յեր-
գելու...
Աշխարհի բոլոր
արվեստագետներն յերգում են
ու հար պիտի ներբողեն
քո հուր կորովը,
քո կարմիր տոնը,
քո անանց փառքը,
բայց այդ բոլորի յերգն ու որ-
հներգը

զարմացած մանկան նիչեր են
հանդեպ
քո վռսկեփրփուր յեվ արեւա-
փառ վեհ արշալույսի...

Աշխարհը այսօր հսկա խառ-
նարան,
մարդու կուրծքն հիմա բոցկլտող
հրդեհ,
իմ հոգին արդեն հրեղեն շոգի, —
յեւ ռ՝ վ պիտի տա գալիք դա-
րերին
այս հանուր հրի պատկերը վսեմ...

Յեւ միշտ ատել եմ անմա-
հուծ թշուար,
բայց, վորպէս վկա քո մեծ այ-
սորվան,
կուգե՛յի ապրել՝
փոթորկումներդ չորս դին պատ-
մելու,
հպարտ որերիդ հեվքը յերգելու,
քո վառ պոռթկումի շնչով հու-
զելու
անվիշտ որերը գալիք սերնդի...
Յեւ յես դեռ յերկար փառքդ
եմ յերգելու,
քե՛զ, Մեծ Հոկտեմբեր,
վեհ լուսապսակ տառապանք-
ների,
վոգորումների,
հաղթանակների...

ՎՈՂՋՈՒՅՆ ԲՈՅՆԵՂՆԵՐ

Խորհրդային
ստեպներից հեռակա,
մեծ հրդեհի կարմիր բոցից Մոս-
կովի
հղում ենք մեր ջահ վողջույնը
տոնական,
մեր լայն սրտի ջերմ պոռթկումը
բոլորին:

Ձեզ, բնկերներ,
վոր մեր աստղին ակրնդետ
տառապանքից կռվի յելած ամե-
նուր,
հերկում եք հին կյանքի դժնյա
արահետ
ու բորբոքում ռազմի մրրիկն ընդ-
հանուր, —

Վողջունում ենք
ծեր պայքարը հրատապ,
ծեր գնդերին հզորագոր, անհող-
դողդ,
մեր հիացումն հոգիներիդ գեր-
տազնապ,
ծեր ընդվզմանն, ըմբոստացմանը
խրոխտ:

Այսօր տոնն է
յերկունքների յերկունքի,
որ ծնունդի, մեծ փրկությունն
ավետող,
որ վերջնական հաղթանակի հա-
վատքի,
որ՝ եզուցվա խիզախությունը
կերտող:

Լսո՞ւմ եք դուք
այժմ ուռան լիաթոր
ծեզ ոգնության շտապող մեր
շարքերի.
վերջին գրոհն է. կա՞ մի վայր,
ուր արդյոք
չեն սթափվել, ուր մնում են դեռ
գերի:

Խորհրդային
ստեպներից հեռակա,
մեծ հրդեհի կարմիր բոցից Մոս-
կովի
հղում ենք մեր ջահ վողջույնը
տոնական
վաղվա բոլոր հաղթողներին կո-
րովի...

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՐԹԸ

Փետրվարի 23-ի ողբան

Ռա՛մ—տա—տա
ռա՛մ—տա—տա
ռա՛մ.
ռա՛—տա—տա—տա
ռա՛—տա—տա—տա
ռա՛մ:
Ռա՛մ—տա—տա—ռա՛մ—տամ
ռա՛մ—տա—տա—ռա՛մ—տամ
ռա՛մ—տա—տա—ռա՛մ—տամ
ռա՛մ—տա—տա—տա—տա՛մ:
(Կրկնել)

Ձա՛րկ թմբուկ, զա՛րկ թրմ-
բուկ,
զա՛նգդ անդուլ, զա՛րկ թմբուկ,
բա՛մբ թնդա ծայնդ թող,
բոմբ դառնա պայթող:

Ձա՛րկ թմբուկ, բա՛մբ թրմ-
բուկ,
վա՛ռ խնդումը տա՛ր թմբուկ,
թո՛ւնդ յնչի սիրտը թող,
բյուր մարդու հաղթող:

— Ո՞վ ե զոփում.
մերոնց հրե կամբը,
նորն ե կոփում
միլիոնների ջանքը:

Ձա՛րկ թմբուկ, զա՛րկ թրմ-
բուկ,
ո՞վ չի զարթուն, զա՛րկ թմբուկ,
ծե՛ն տուր, թող զենք առնի
գուրկն ամեն վայրի:

Ձա՛րկ թմբուկ, զա՛րկ թրմ-
բուկ,
զա՛րկդ անդուլ զա՛րկ թմբուկ,
ո՛րն ե մեր, առ՛նն ե մեր
վա՛ռ ու հաղթական:

զո՛րքն ե մեր, փա՛ռքն ե մեր
դոփում հաղթական.

Մեծ Միության զորքն ե,
մեր Կարմիր Բանակը,
նոր ե, հզոր ե,
մեր յերկրի պահակը,

Կոշտ են մեր ձեռքերը,
հաշտ են մեր շարքերը,
զուր են ջանքերը
նենգ վտոխների:

Մի՛րտ առեք, սի՛րտ առեք,
նո՛ր մարտիկներ, սի՛րտ առեք,
ուժը մեր—դաշն ե մեր
գեղջիկ—բանվորի:

Մե՛նք, վոր տարանք
այս աշխարհի բեռը,
պիտ, վոր դառնանք
աշխատանքի տերը:

Վեր կացեք, վե՛ր կացեք,
բյուր քնկածներ, վե՛ր կացեք,
յերթն ե մեր, հե՛րթն ե ձեր
կովի վճռական:

Հե՛յ, ծածանե՛ք
ձեր դրոշմ բարձր,
գոռ թնդացե՛ք
Մեծ Իլիչի կանչը:

Ձա՛րկ թմբուկ, բա՛մբ թրմ-
բուկ,
զա՛նգդ անդուլ զա՛րկ թմբուկ,
ո՛րն ե մեր, առ՛նն ե մեր
վա՛ռ ու հաղթական:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Շատերն են գտվել
քո ասպետների
դարն ու Թամարան,
շատերն են յերգել
քո անցյալը հին,
չքնա՛ղ Վրաստան:

Իսկ յես,
յես այժմ կերգեմ
քո խինդն այսորվան,
քո շունչը հրկեզ,
քո թափը վսեմ,
ըմբո՛ստ Վրաստան...

Տեսնում եմ մտքովս ահա
գալիք որերի արշավի միջից
քո վառ ապագան,
վորի լույսերը անմար
հրդեհ վառեցին հաղթ զավակ-
ներիդ կրծքում խուլական:

Տվեցի իմ ճիգը մատաղ
քո տագնապների մրրկոտ գործին,
խառնեցի իմ ճիչը ուրախ
մեռնող բռնության ծանր տըն-
քոցին,—
տեսնելու քո ծնունդը նոր,
քո սովետական յերկունքը
բոսոր
վուլկա՛ն
Վրաստան...

Այսոր մենք տոնում ենք
խինդով
քո Փետրվարը կարմիր,
հիշում ենք որերը վրդով
ու վառվում հույզով հրթիռ:

Պարգել ենք բազուկ մեր ան-
հաղթ,
մեր կամքն հրետ ե դարձել,
կերտում ենք Ջեմո ու Չաթախ,
իսկ վաղն հրաշք կը գործենք:

Բացվում են վայրերը բոլոր
դպրոց, տեխնիկում, բանֆակ,
շտկվել ե ուղին մեր վուր
ու կանչում թուջել արագ:

Նոյի այն տապանն հին ու
նեղ՝
մատնված հրի ու հողմի՝
քշվել ե կամքով մեր հեղեղ
յերկրից վոսկե գեղմի:

Այսոր մենք տոնում ենք
հպարտ
քո տարեդարձը դարձյալ,
տեսնում ենք գալիքը զվարթ,
գալիքը անցյալիդ արձան:

ՎՈՉ ՓԱՓԿԱՍՈՒՆՆԵՐԻՆ

Ձե՛զ եմ
կանչում այսօր,
ծե՛զ եմ ձոնում, կանա՛յք,
ծեք յերկունքով բոսոր
վառվեց յերկրում
լուս այգ։

Դո՛ւք, իմ
բույրե՛ր մատղաշ,
դո՛ւք, իմ մայրե՛ր անուժ,
յեկե՛ք կյանքից չարքաշ
ու ժպտացե՛ք
անուշ։

Շիկնեկ
ե կյանքն հիմա,
մեր կամքը թեժ արդուկ.
յեկ ո՞վ պիտի ժպտա
նոր որվա դեմ,
բան դուք։

Փշրում
ենք մենք շղթան,
ամոթն այսբան տարու,
յերբ կար հարուստ—աղքատ,
յերբ կար ,եգ ու
արու՛։

Ցավը
մեկ ե չորս դին,
ճնշվող—թե երտ, թե հարճ.
թող արդար մեր բրտինք
սրբի ամոթն
անդարձ։

Յեկե՛ք
մեզ մոտ, բույրե՛ր,
մեր հոժ շարքերն հրդեհ.
վառել ե հույս ու սեր
Մեժ Հոկտեմբերն
արդեն։

ԱՇԽԱՐՀԸ—ՔԵՉ ԲԱՆՏ

«Կինն առաջին մարդկային
եալն ե, վոր բնկել ե ստըր-
կու թյան մեջ»։
Բե բեկ

վերջդ գտիր
ամոթից ու անից՝։

Շինել են բեզ տերեմ
ու հարեմ անել.
դրել դռանդ մի շուն,
մի ներքինի բուս։
Պատել են պատանքով ճերմակ,
բաշել են չադրան գլխիդ,
գատել են բեզից աշխարհ.
— Ձր գայթակղվի՛ս...

Նետել են բեզ
կնանոց,
խոհանոց։
Նոհանոցը բանտն ե բո նեղ։
Բանտել են կյանքդ դալար,
սանձել փափազ ու իղճ,
թողել են մի աստված
անտոի, խուլ, անխիղճ...

Ընտանիքը,
բո հարկն ու տանիքը
բոնուլթյան վորջ ե միայն,
ուր կա հայրության ու ծեծ,
կամ անարգանք ու մահ,
ուր կա անկողին անխնդ
ու մի տեր անսեր ու բիրտ։

Ոջախիդ մեջ
մարում ե բո կյանքի ջահր,
ոջախիդ մեջ
ձանձրուլթը փոստայն ե հյու-
սում.

Այսօր,
յիրբ դուրս տենդոտ ե ու վառ ե,
յիրբ շուրջդ աշխարհ ե հուզ-
վում,—

կին դու,
յիլի՛ր, յիլի՛ր...

Կին,
բո հակինթ աչքերդ
ու նախկին տենչերդ
եկ չունին զին։

Հիմի դու
նորանուն տուրքդ տուր,
հրահուր շունչդ բեր
նոր որվա դեմ։

Աշխարհը
նաչել ե բեզ
ու պահել ե հնից
վորպես խաղալիք անկամ
յեկ կամ տոփանքի մի իր,
դարձրել ե բեզ գրաստ
հեզ,
համեստ,
անծայն,
բարձել ե ցավը մեջքիդ։

Աղաթը հին
բո դատն ե կտրել.
տվել ե բեզ մարդի,
կնուլթյան,
գերուլթյան,
զերել ե կամքը բո թանգ,
բո անդադդ հոգին,
ծախել ե փոնց վոր ապրանք
բո մարմինը գիրգ։

Կարճել ես բո որը.
դու խեղճ,
անճար
մի հարճ.
Նարջել ե յուր փողը
բո մարդը բեզ վրա
ու պատվիքել խառիվ.
«Պատիվը բո պահիր,
յեղիք նամուսով ամուսին,
թե չե...



22935.59

Յ Ե Լ Ի Բ...

Քո՛ւյր իմ,
ննչվա՛ծ ընկեր,
գրկվա՛ծ դու կին,
անլույս խավարի մեջ
տառապող քո՛ւյր իմ...

Թույլ տուր, վոր կիսեմ
իմ խինդը,
Թույլ տուր, վոր հուզեմ
քո սիրտը:
Լսի՛ր:

Գիտե՞ս դու,
վոր այսոր քո որն է,
մարտ ամսի ութը,—
պայքարի տոնը կնոջ:
Փրկարար տոնն է ամենուր
անանուն բոլոր կանանց,
վորոնց բաժինն էր ջանքը
ու վերջն էլ զրկանքը անլուր:

Հիշիր դու
այս տոնը, քույր իմ,
յեվ մարտի ութին
մարտի յեվ դու:
Մարդկության կեսն ըմբոստ
բողոքի ցույց ունի
բոլոր ցեղերի դեմ:
Բորբոքվիր դու ել,
քո՛ւյր իմ,
փողոց յեվ մեզ հետ:

Այլեվա՛ գուր ե,
ի գուր ե
հեռվից դիտել միայն:
Կովի հերթը այսոր
քոնն է,
մերն է հիմա:
Դո՛ւքս արի փողոց,
մարտիկ քո՛ւյր իմ.
Թող թափով պայթի
դարերով կիտված
քո զայրույթը հուր...

Այսորվա ցույցին
միացիր դու ել.
ցնցի՛ր ուժովդ նոր
աշխարհն հին, քույր իմ:
Մաքառող գնդի հետ բանվոր
յեվ ընդդեմ նրանց,
վորոնք կապանք դրին
մտքիդ, կամքիդ վրա:

Յեղի՛ր
ու զա՛րկ,
ինչպես կին հերոսն է զարկում:
դարբնելու խինդ որը կյանքում:
Աննման Ռոզան...
Պերովսկայան...
Քո՛ւյր իմ,
գիտցի՛ր նրանց,
հիշի՛ր նրանց,
ու դո՛ւքս յեկ պայքար...
Քո՛ւյր իմ...

„ՅԱՇԱՍԸՆ“

Քո յերկրում արեվը բարկ
վառել է մի հզոր զարթոնք,
ու բերկրուն քո հարկի տակ
բացվել է նոր, մի պայծառ տոն:

Հյուսել է կանաչախիտ
Ապրիլը բեզ հաղթի կամար,
հույսերով կարկաչ ու խինդ
կապի՛ր լուսեղ բախտի բամար:

Զուգել է փիրուզ ու զառ
յեզերքը քո ծովը ծանոթ,
գրկումդ հուզող մի զարկ
յեվ սեվ հոսանք մի կիզանուտ:

Որերդ—եկեքարաշարժ—
գծում են այլ կյանքի ակունք,
նոր յերգ ե նետել տշխարհ
հույզերիդ փոնտան Բազուն:

Իգիթն ես Արեվելքի,
քո քաջ բազկից՝ հազար մի ջանք:
Ծաղկի՛ր դու, հրե յերկիր.
— Բի՛ն յաշարն Ազերբեյջան...

Դ Ե Պ Ի Մ Ի Տ Ի Ն Գ

Ջահելի տոնն և այսոր. միտինգ կա այգում,
որկեսար ու թափոր, ամեն տեղ շարժում:
Խմբեր,—մեծ ու մանուկ,—յեկել են հանդես,
հիշեր, խինդ ու աղմուկ վողջունում են մեզ:
Տոնական նշաններ, պրակատ, նկար,
անթիվ ալ դրոշներ փողփողում են վառ:
Կարծես մի բոսոր հոսանք և շարժվել.
բայում են կոմսոմոլ, պիոներ ջահել:

* * *

Շիկնել և մի ցնծում ամենքի դեմքին:
Որկեսարն և թնդում: Ե՛յ, դուրի՛ր ուժգին:

Փոխի՛ր վոտքերդ արագ, անցի՛ր շարքով խիտ,
պահպանի՛ր քայլ ու կարգ հպարտ ու լրջմիտ:

Շարքեր ուղիղ ու սեգ, կայտառ ու անվախ,
անցե՛ք ու զիլ հնչեք լողունգը որվա:

Շարքեր, տղա, աղջիկ,—նոր ծիւր, նոր վոստ,
պատրաստ յեղեր կանչին, մեծ կանչին բմբոստ...

* * *

Այսոր բաղաբն աշխուժ տիրել և հրճվանք,
յեկել և նոր մի ուժ, վառել կյանք ու ջանք.
այսոր բաղաբն առույգ, փողոցները հոժ,
արեվը մի խարույկ, ջահելները բոց...

Ու գալիս են կրկին ջահելներ կայտառ
հչալու աշխարհին գալիքը պայծառ:
Ծփծփում և այգում մարդկային հեղեղ:
— Մս՛ս... Բացվում և, բացվում միտինգը այնտեղ:

Ա Ր Մ Ե Ն Ի Ա

Կրկին դու
ժպտում ես իմ դեմ,
կանչում յես,
չքնաղ իմ յերկիր.
սրտիս նոր խոսքեր ես նետել,
հեռվից ես կարոտ եմ գրկիդ...

Չունիս ել
լացի մի հնչյուն,
բո կանչը
սիրերգ և հրե.
Արմենիա, իմ ֆենիքս թռչուն,
կյանքիս բյուր ջահեր ես վառել...

Շիկնում են
սարերդ զարթնող,
գուգվում են
դաշտերդ անշուք,
հախրում և զալիք կերտող,
գալիքը բո կառքն և բշում:

Լարվել և
ջանքը բո անկանգ,
վառվել և
յնուանդդ յեռուն.

հերկի՛ր, թող գետինը տնրա,
մետաղը զնգա՛ թող հեռուն:

Ջրերը,
գետերը բո հորդ
գրկել են
մի հիդրո-կայան,
Արմենիա, բո խինդը դդորդ,
բո թափը բետոն ու կանալ:

Փթթում և
սերունդը—բո փառք,
թնդում են
շարքերդ պատկոմ:
Բացվի՛ր դու, Կոմսունի համբա,
ծգվի՛ր դեպ Մասից ել այն
կողմ:

Կրկին դու
ժպտում ես իմ դեմ,
կանչում ես,
չքնաղ իմ յերկիր.
սրտիս նոր խոսքեր ես նետել,
հեռվից յես կարոտ եմ գրկիդ...

1. Հնձում են արտերը չորս դին,
բարին բերում են տուն
ցնծում են սրտերը վերատին.
տարին առատ խնդում

Ծփում են հասկերը վոսկի:
Ամառ ե. արեւն ե վառում:
Ու շներ շիկնել ե շոգից,
հոսում ե բրտիները առու:

Մանգաղն ու յեղանը ուսած՝
իջել ե շներ յուր թառից
ու վարը դիզում ե հասած
վարսակը, ցորենն ու գարին:

Կալվորը որանն ե բարձել.
դեղնել ե շավիղը կանաչ.
սալերը վրան են դարձել.
նոինչ ե, աղմուկ ու բառաչ:

Վառվում ե արեւը անթարթ,
բառնում են որանը, բառնում,
բայում են յեզները հանդարտ,
դառնում ե անիվը, դառնում:

Բացվել ե տափերում կտր
ուրախ հանդես կալի,
լցվել ե գյուղերում բոլոր
կյանքն ու ջանքը ելի:

Ցայտում են արեւից հրկեզ
բրտինը—հերմակ մար
ջան,
խայտում են վոսկիները պես-պե,
կալում-կախարդ շրջան

Վառվում ե կալերում բերկրանը
հասկեր, պտույտ, փոշի
պարում են աղջիկներն, կանայք
Դե՛, ջան յե՛զր, բաշի՛..

2. Քայլում են յեզները հան
դարտ,
կալում են որանը, մանրում,
վառվում ե արեւը անթարթ,
դառնում են կամերը, դառնում

Շնչում են խնդուլթյամբ զվարթ
որերն արեւ ու տար,
հնչում են ծայներով արծաթ
հնձվորի յերգ ու տաղ:

— Գի՛ր...
— Գի՛րք...
— Լրագի՛ր...

Հնչում ե վառ կանչը,
նչում ե պահանջը
ամենուր
չորս դին,
յետ ընկած հեռավոր տեղերից,
արթնացած բյուրավոր գյուղերից
որավոր
ուժգին

Լսվում են հուզումի խոսքեր,
ուսումի խոսքեր վոսկի...

Լսո՞ւմ եք
դուք ամենքդ,—

շեփ կոմիսսիաներ,
կուլտ-բաժնի վարիչներ բոլոր,
բաղաքի բաղլուավար ընկերներ,
լսո՞ւմ եք:

Դուք,
վոր սիրում եք կուլտուրա,
գնում եք bibliotek, Госиздат,
հալատով կարդում եք նոր
լուրը,—
Հավասր, Ռեյտերը, Ռոստան,—
յեվ դուք,

վոր ձեր տանը խոսում եք
աշխարհի ամեն մի ծայրի հետ,
բյուր սրտի զարկերը լսում եք
ու վերջն ել՝ մի ռադիո-կոն-
ցերտ,—

խոստացե՛ք, վոր գոնն մեզ ել
կ'ուղարկեք գրքեր ու զագեթ:

Անցավ են,
յերբ կյանքը նգովք եր.
հանցանք ե
կանչել միշտ հնին:
Տգետը
անճար ե, անզոր ե,
սավեթը
խառ ջահ ե հիմի:

* * *

Մեր չորանը չուր չափող,
են բատրակն աշխատած վար-
ծով,

բաղմանչին բաղերում բանող,
շինականը շեն իր հացով,
— բոլորը, բոլորը այսօր
լսել են կոչը են անգին,
զարթոնքի ձենը զիլ ու սուր,
վոր նետեց սավեթն ամենքին.
— Ուսում...

Գիտե մեր գեղջկուհի Յեղսոն,
վոր խնամքն հավի ու կովի,
ցավի դեղն ու յելը սովից
մի խոսք ե հզոր.
— Ուսում...

Տեսել ե գյուղացի Արթինը,
են հրաշք գութանը—տրակտոր,
ջրերը վարող են տուբերներ,
լույսի ծովը, ուժ ծնող մոտոր:

Ել ի՞նչպես նա հնին կառչի.
յերբ կյանքի իմաստը այլ ե,
ու բացվող համբերը լայն են
ռաբոչու, ռանչպարի առջև...

Գիտենք՝ զրկանքը են մու-
թիցն եր.
նոր կյանքի լո՛ւյս տվեք.
կուվում հաղթողը գիտակիցն ե,
կովի թո՛ւրը տվեք...

* * *

Թռչում ե մեր միտքը գլուղից,
պատկերում որերը խավար:
— Են ո՞վ ե բացել նոր ուղի
ու շաղել խոտերը յուր վառ:

Ահա մենք հիշում ենք ելի.
ո՞վ կասի յերազ ե դա լոկ:
Աշխարհը ծնել ե Լենին,
վոր զուգն մեր կյանք ու արոտ:

Տեսեք. հուր որերի միջից
ամբիոնի վրա
յերեվում ե Լենինը մարտիկ,
հուրհրում յուր խոսքը կրակ:
Մեծ շենքը բռնել ե մաստան,
հազար, հազար, հազար,
բանվոր ու բառրակ,
դառնացած սրտերը բորբ,
նրանք, վոր յեւան բարրիկադ
չարիքը սրբելու հրով:

Խոսում ե Լենինը,
հուզում ե Լենինը,
խլվում ե ամեն մի հնչյուն.
բառերը խլվում են մարդկանց
արթնացող գանգերին՝ հեղեղ:
Հնչում ե փոթորկող կանչը.
— Մովորե՛լ, սովորե՛լ, սովորե՛լ...
Չը պիտի մնա մի մարդ ան-
ուսում

Մեծ Հոկտեմբերի
տասերորդ
տարում:

* * *

Ե՛յ, բերե՛ք, բերե՛ք,
գրով ու գրքով, լրագրով

հեղեղեր խրճիթ ու ողա,
նոր որվա հրով ու մրով
հրահրեք ակտիվը գյուղի,
յեվ մարդը՝
միշտ կպած հողին՝
յուր մտքի թռիչքովն հպարտ
թող տեսնի սարերից այն կողմ
վողջ աշխարհը հաղթ
յեվ որերն ըմբոստ,
մրրկվող...

Տվե՛ք մեզ բյուր գրքեր,
գրոտած թո՛ւղթ տվեք,
մրոտած լո՛ւր տվեք.
մեր մտքին հո՛ւր տվեք,
թող հուրը լույս տա մեր խոր-
շերը,
թող ցնդի մեր մտքի գիշերը
են մութ...

* * *

— Գի՛ր...
— Գի՛րք...
— Լրագի՛ր...

Հնչում ե վառ կանչը,
նչում ե պահանջը
ամենուր
չորս դին,
յետ ընկած, հեռավոր տեղերից,
արթնացած բյուրավոր գյու-
ղերից

որավուր
ուժգին
լավում են հուզումի խոսքեր,
ուսումի խոսքեր վռակի...

Մարդկանց բարդ ուղեղը մի
տոկ
մտքի կայծն աշխարհ ե ցնցում.
ցանցել ե ինչպես մի ուղիո
մարդկանց մի վառ լոզունգ—
ուսում:

Կ Ա Ռ Ո Ի Յ Ո Ի Մ

Յեկե՛ք այստեղ.
ո՞վ կա այդտեղ
մեղկ ու տարտամ,
պարապ կանգնած.
յեկե՛ք այստեղ:

Տեսնո՞ւմ եք մեր
գետերը խենթ,
վոր կորչում են հեռուններում,
բերում ափերն անհրապույր:
Տեսնո՞ւմ եք ձեր շուրջը դաշ-
տերն

ամայացած ու անջրդի:
Տեսնո՞ւմ եք այն գյուղերը մեր,
անկյանք, մզլած հյուղերը խեղճ:
Ե՛յ, տեխնիկներ,
ինժեներներ,

շարժե՛ք կյանքը, տվե՛ք մեզ
լույս
ու վանեցե՛ք հնադարյան
կենցաղը դուրս:

Շուտով պիտի փորել ջրանցք,
յերկար ջրանցք անցկացնել՝
նորոգելու,
վորոգելու
տուն ու այգի, դաշտեր ու հանդ:
Պիտի դնել այդ գետերին
տուրբին, տուրբին,
տուրբիններով պիտի սանձել
ջրերը խենթ,
յեվ շրջակա գյուղ ու ավան
թեղով լարել ելքատրոտենդ:
Ելքատրական
լուսով վառել գյուղը խավար,
ելքատրական
ուժով վառել կյանքը դանդաղ:

Յեկե՛ք, յեկե՛ք.
ո՞վ կա այդտեղ
անհարացած
ու վարանոտ.
յեկե՛ք այստեղ:

Տեսնո՞ւմ եք են
սարերն հուժկու,
վոր կորել են
լեռնաշխարհի մեզ մշուշում:
Տեսնո՞ւմ եք են
ծերպերը թեք,
վոր կանգնել են
վորպես պատվար մեր ընթաց-
քին:

Տեսնո՞ւմ եք են
ժայռերը լերկ,
վոր զատել են
գյուղը բաղբիջ. կյանքը կյանքից:
Ե՛յ, տեխնիկներ,
ինժեներներ,

պայթեցրե՛ք,
դինամիտով ու յերկաթով պայ-
թեցրե՛ք

այդ կուսական լեռները սեգ:
Պայթյուններով ու շառաչով
բանդեցե՛ք դուք մեր լեռների
կուրծքը հպարտ:
Պայթեցրե՛ք, քանդե՛ք, փորե՛ք,
լեռնարգանդում բացեք ճամբա,
թող յերկունքի ցավով ճչա
սարն աժդահա:

Պիտի շինել,
հսկա տունն
ավելի մեծ, ավելի խոր.
Ի՛նչ Սեն-Գոթարդ, Ի՛նչ ե Սիմ-
պլոն:

Հրաշք տունել
 պիտի կերտել,
 ուր որն ի բուն արծազանբլի
 հեկքոտ վազքը անիվների
 ու զիլ զնգոցը ուշյալների:

* * *

Ու այնուհետ՝
 աչդ յերկաթե համբաններով
 լույս քաղաքից դեպի գյուղերը
 խավար
 պիտի բղխես, պիտի հորդես
 կուլտուրայի ակունքը թարմ:
 Պիտի լավի շարժման, ութմի
 յերգը ժխոր,
 պիտի հեղա կառուցումի
 շունչն աղմկոտ:

Յեւ գյուղերը պիտի դառնան
 քաղաքներ,
 մութ գյուղերը՝ բանփակներ,
 բոստանները՝ տնկարան,
 վողջ հին կյանքն ել՝ թանգարան:

ՔԱՂԱՔԻ ՅԵՐԳԸ

Իմ սերը
 քաղաքներն են զնգուն,
 իմ հույզերն
 յնուզեռն ե յերկնում,
 հարադմուկ
 ձայներով
 հնչեղ
 փողոցը իմ յերգն ե յերգում:

Մանում եմ
 ժիր շուկան—մի ֆոկուս,
 նետում եմ
 խնդուն յերգը հոգուս,
 կենսառատ
 համերգին
 ժխոր
 ձայնում եմ զնգուն յերգը հո-
 գուս:

Փռում եմ
 աննգեր սիրտս բաց,
 հեղում եմ՝
 շարժումի հետքն րնկած.
 շոգեկառք,
 տրամվայ
 ավտո
 վազում են՝ յերգովս արբած:

Կառչում են
 հոսանուտ տարերքին,
 թռչում եմ
 ցամաքից դեպ յերկինք.
 աչերողրոմ
 յեւ գոկեր,
 զարած,—
 ամեն տեղ ակկորդ կա յերգիս:

Վառվում եմ
 հուր ցավովն աշխարհի,
 խառնում եմ
 բյուր ջանքին ջանքս արի.
 առնական
 բազուկներ
 ջլուտ
 կռում են յերգս—կոչ պայքարի:

Վողջ կյանքը
 մի կոնցերտ ե փոփոխ.
 քաղաքը
 մի զնգուն հնչափող:
 Յես պոյետ,
 փողոցի փողհար,
 յերգում եմ պայքար ու ամբոխ:

Փ Ո Ղ Ո Յ Ը

Նորեն լի մայիթեր ու շարժում,
 արեվոտ մայիթեր
 հուրհրան.
 ու նորեն
 կյանքովն իր ուրախ
 փողոցը ինձ գիրկն ե քաշում:
 Դիմացս—չենքերի վրա
 արեվի նարինջն ե
 ծաթել,
 գույների
 քրքիջ ե բացել
 փողոցը—չքեղ մի նկար:
 Ձայները հյուսել են մի յերգ,
 անցորդի ծիծաղն ե
 հնչում,
 „Ford“-երի
 սիգնալն ե կանչում.
 փողոցը սիմֆոնիան ե մեր:
 Բանում են մաշինը չեվ մարդ.
 շինարար զարկերն են
 անդուլ,
 բանվորի
 շարքերն են խնդում,
 փողոցը յերակն ե շարժման:
 Աղմուկը դառնում ե ժխոր.
 ծեծկրվող սալեր ու
 տները,
 շոխնդով
 մետաղ ու գնդոց.
 փողոցը տարերքն ե մեր նոր:
 Նորեն լի մայիթեր ու շարժում,
 արեվոտ մայիթեր
 հուրհրան
 ու նորեն
 կյանքովն ե ուրախ,
 փողոցը ինձ գիրկն ե քաշում:

Հ Ր Շ Ե Ջ Ն Ե Ր Ը

Տո՛ւ—տո՛ւ—տո՛ւ...

Ավտոնե՛ր, շարվեշար սլացեր ժխոր փողոցով վայրը հըր-
 դեհի:

Վառ ջահե՛ր, լույսերի ցնցուղներ սփռեցեր ահաբեկ ամբո-
 խին մայիթերի:

Սա՛յլ, կառքե՛ր, տրամվա՛յ, շտապ անցորդներ, կա՛նգ
 առե՛ր՝ անցնի հուզված գնացքը շոգու, ներվերի:

Հրդեհ կա, հրդեհ...

Տո՛ւ—տո՛ւ—տո՛ւ...

Մոտ թաղում լսվում են ձայները գանգյունով սրտածար
 յեվ ուժգին:

Մու՛թ, նեղլիկ փողոցում սաստկացող աղմուկներ, վազվզոց,
 արժումներ կան տենդոտ:

Մերձակա տներում, պատշգամբ ու տանիք խոնավող մար-
 դիկ, շփոթ հայացքներ:

Դիտում են, խոսում, ցույց տալիս դեմը, ուր ծուխը արդեն
 գորշ սյուն ե ցցել յերկրից յերկինք:

Հրդեհը այնտեղ հրե նանկերով խավարը պատռած՝ յուր
 գոհն ե լափում:

Վառվում ե մի տուն, մի հսկա կերտվածք:

Տո՛ւ—տո՛ւ—տո՛ւ...

Հրչեջ գնացքն ե սլանում արագ:

Հապճեպ անցնում ե ջրմուղ մերենան խոնջած բաղաքի
 պողոտաներով: Սալահատակը, քարերն անդադար զուռում են
 ցատկոտ անիվների տակ:

Նիգեր, կացիններ, յերկար կեռամաններ, հսկա սանդուխք-
 ներ,—գործիքներ բարձած՝ վազում են խռով ավտոներն ահա:

Նրանց խենթ վազքից գործիք, մեքենա վեր են ցատկո-
 տում, մետաղյա ձայնով զնգում են, շաչում:

Վհատ շրջական խուլ դղրդում ե ավտոյի ցնցող բռնաբեր
 կանչից, նրա բառաչից:

Ջահերն արնագուն ջուրեր են զցում, խոխուղներն դառ-
նում անալոր:

Իսկ փողհարները անընդհատ, անվերջ հուզմունք են զու-
ժում հրդեհի, կովի...

Տո՛ւ — տո՛ւ — տո՛ւ...

Ահա յեւ մարդիկ հաղթ ավտոների բեմերի վրա:

Կանգնել են, ձգվել իրար կողք-կողքի հուժկու հասակով
հրշեջներն հպարտ:

Ջահերի լույսից վառվում են նրանց սաղավարտները փոսկե-
զուն ջուրով: Նրանց աչքերը կախնում ցայտուն, լրջմիտ դեմ-
քերը առնական, ազդու՝ վառվում են, կարծես, հրապաշտարի
այրող տաճնապով:

Նրանց կեցվածքը՝ պատրաստ հրի մեջ նետվելու իսկույն,
նրանց փող տեսքը՝ փորպես պայքարի վառ բովումն կոփված
բրոնզե կերտվածք:

Ձգում ես ահա, վոր հրշեջները կրակ են շնչում, յեւ նրանց
կուրծքը մի խառնարան է ըմբոստ ու կիզիչ, վոր չարիքի դեմ
լավայի տապով, թափով կր կովի:

Աղեղի ցամամբ լարվել են նրանց մկանները պիրկ, բո-
ցակեզ շնչով շիկնել են նրանց կամքը յերկաթե՝ պատրաստ զար-
կելու հարվածն անխնա, պատրաստ՝ կանխելու չարիքը ներսից:

Հե՛յ, սլանում են քաջ հրշեջները վայրը հրդեհի, բոցերի,
մրի...

Տո՛ւ — տո՛ւ — տո՛ւ...

Վ Ա Կ Զ Ա Է

Ջուրի փոշին ե չոքել
չորերիս, հուշերիս անկարգ,
մայթերի կարտուն ե թերել
ինձ դեպի յերկաթե ճամբան,
վոր բռնել եմ այսոր:

Ճամբորդ եմ յես կրկին՝
ճամբրուկս ու խոհերս ուսած,
նետել եմ քաղաքի յերզին
խնդումս կենալի, ազատ
ու բերկրանքս բոսոր:

Վակզան ե ահա իմ հանդեպ,
քաղաքի զի սիրտը զարնող-
բերել եմ նվեր, վոր բանտե
փաղաքուշ իղձեր ու ցնորք
յուր թաթերում հզոր:

Թողել եմ կյանքը իմ-վագոն
որերի շոգեշարժ կամբին,
վագում եմ հեփինկ վազքով՝
հասնելու իմ կայանն անգին.
— Մի լուս-այգ հորիզոն...

1

Հուզված ե վակզալը, — մի
ծով:

Ձգում եմ՝ հոսանքն ե քաշում.
հազարը՝ զբաղ մի գործով
վագում են. դե՛ շուտ, դե՛ շուտ...

Կիտվել են յենտերով յերկար
դրսում կառք ու դռոգ,
բոթում ե ուղեփորն անկարծ
յետքից՝ մուշան բեռով:
Խուռներամ ամբոխ, մի կրակ.
աղմուկ, ժխոր, շփոթ:
Խոնվել են իրար վրա
բեռներ, իրեր, ճամբորդ:

Յեռում ե շենքը վառ կյան-
քով.

դիշեր-զոր յելումուտ ե միշտ:
Հեփում ե շոգեշարժն այն կողմ
փորպես մի հղիացած ըմբիշ:
Խայտում են դեմքերը չորս դին.
Կալեյդոսկոպ վակզալ.
ձգվում են ճամբեքը անթիվ
զնացող — յեկողը հազար:

II

Կասսաների մոտ,
ներսը,
յերկար հերթաշար:
Մարդկային պոչը վոլոր
դահլիճում գծում ե զիզգագ:
Անհամբեր են այնտեղ.
բոպեններ են համբել
ոչերեղում,
հերթում
ու համրում են դեռ:
— Ե՛յ, դո՛ւք, բացեք կասսան,
տվե՛ք առմասկ, տոմսակ...

Նստարանի վրա
ահա քնած մարդիկ:
Որորում ե նրանց
շուրջի աղմուկն ու նիչ:
Ո՞վ ե պոռում այնտեղ,
ո՞ւմ իրերն են կորած:
— Շառ ես զցում, բնկե՛ր,
գիտցիր, հետո գոռա:

Բազաժի մասում
կշում են,
զրում ու դարսում:
Բեռնակիրները դրսից
ծայնելով,
ցնցվելով անվերջ՝
բերում են ճամպրուկներ, կապոց,
մի խոսքով՝ վեշի.

խակ նրանց յետեւիցն ահա
աչքը չորս արած՝
կանչում է ապրանքի տերը,—
չարչին։

— Носильщик, լսի՛ր,
տո՛ւ, մարդ ես, իմացի՛ր մի բան,
մարդու պես վերցրու ու դիր,
մուղայթ կաց՝ չը ջարթվի միջաշ։
Յաշխկում ձվեր են դարսած,
կարգինում՝ գինի ու արաղ։

— Արաղի փող տվեր դուք
ինձ, բարեսիրտ յեղեք մեզ մի քիչ,
շնորհներ ծխախոտ մի հատ,
յես մի խեղճ, մի անտուն ան-
հատ...

Կանգնեցրել, դիմում է ժեստով,
դեմքն ուռած, հագուստը մի չուկ,
խորամանակ, վատան իր շեշտով,
վաղուցվա բոսայկը չարչուն։

— Չունիմ, գնա՛, կորի՛ր,
անտեր դուն շո՛ւն պարապ...
Աղմուկ. հիշոց. կռիվ։
Միջիցիոներն ահա։

Անցնում են բանվորի խմբեր.
գնում են երսկուրսիա։
Շորերը պարուսին թեթեւ,
շատերի կողքին պայուսակ։
Դահլիճում ենմելիք, տուրնե,
վիճողներ, յեվ՝ կատակ, յեվ՝
խիկոյ։

— Ե՛յ, Կա՛ տյա, սիրուն չես դու ել,
ո՛ւր ե ալ աղլուկը գլխիդ...

Խմբվել են սեղանի շուրջը
անցյալի տիպեր հեռացող.
Խմել ու պրծել են սուրճը
ու հիմա զրուցում են թախծոտ։
Ռ՛ւր Դաչա-ն առաջվա ու բեֆ,—

Ի՛նչ սեզոն, մարդիկ չէ՛ փուր
Մաշվել և շղարշ ու շխիֆ,
մնացել և վաղանց մի կարոտ...
Ու հանկարծ
մի ծայն.

— Ինչ լավ եր ամառը... անցավ...
Մեր որն ել, ավա՛ղ, անցավ...

III

Ջա՛ն,
առաջին գանգ։
Դահլիճում տիրեց մի խուճապ։
Յեռաց լայն պեռուսի կյանքը,
ու հանկարծ շտապ
խուժեց մեծ հոսանքը գեպ դուրս
շորերով, իրերով զինված
վագեց դեպ գնացքը մոտիկ
լցվելու վագոնները ձիգ։

— Զի՛նգ, զի՛նգ...
Ջնգաց այն կողմից
գանգն յերկրողը զիլ։
Վերջին մարդիկ թափով
մտան վագոն։
Պատփորմայի վրա
մնացին ուղեկցողները,—
ազգական, ծանոթ, բնկեր։
Վագոնի պատուհանի միջով
փոխանակվում են
ժպիտներ, խոսքեր հակիրճ։
Լավում են անուններ կանչվող։

— Շալիկո՛ւ... Խաչի՛մ... Մկր-
տի՛ի՛ն...

Շչակ, շչոց, ճիչ։
Շոգեկառքն հեվաց ուժգին
Փը՛՛՛՛՛—վը՛՛՛՛՛—թը՛՛՛՛՛
Բուֆերներ խփվեցին իրար
ցրանգ,—ցրո՛ւնգ—դրա՛նգ
Անիվներ շարժվեցին հնչել,
չըրը՛ք—չըրի՛ք—չըրե՛ք,
ու սուրաց գնացքնա ր-ազ
կրակ, կրակ, կրակ...

ЕРКООП

1

Յերեկ եր միթե այդ,
յերբ րազարի մեյդանում,
շուկայում շոգ ու փոշոտ
վխտում ելին անթիվ
դուքանչի չարչիրը չար
ու մակերներն անհոգի։

Դեռ յերեկ
մեր պողոտայով ձիգ
ծգվել էին շարվեշար
վաճառատուներ,
բիրժան,
ու ժամր,
խակ փողոցում անծուկ
փորփրել ու խրվել էին
բորբոսնած փոսերը
խանութների
ու աների։

Սակայն այսօր,
այսօր որճաս ապրող
կրպակների կողքին,
փորպես մի սուր սեպ
սակարկող վայրերի սրտին,
ցցվել և խրվառ,
անհոգողող մի շնոր
— ЕРКООП...

2

Հիշո՛ւմ եր,
փոր առաջ
հին,
անխանի ֆիրմայի
ցուցանակներն էլին ցանցում
ֆրասաղն ու ֆրոնտոնը տան.

հիշո՛ւմ եր,
գրված եր լինում
վատ, փողոցի տառերով
«Торговый дом ашхинеги янв К»

Այնինչ այսօր
ել կորել,
նորել են դրանք.
այսօր դուք կարդում եր հպարտ
մի բառ միայն՝
— ЕРКООП...

3

Փողոց։
Մայթեր։
Ու անթիվ մարդիկ։
Հարածող դեմքերի վրա,
հաղթ ու նոր շենքերում
յեռում է առորչան ահա։
Ջգում ես,
փոր մի ույժ,
յուր հուժկու կամրով
շարժել և անիվ ու մկան,
խրվել և աշխատանքն անկանգ
նոր յելքի,
վերելքի ճամբով։

Այսօր մեր յերկիրը ազատ.
մեր յերկիրը խնդուն
տոնում և յուր տոներ,
զարթոնքը գվարթ։

4

Ու դեպի գալիքը ձգվող
լայնարձակ նամբերի միջին
բացվել և կայանք մեր,
տնտես մայրը մեր,
ЕРКООП-ը։

Յանգել և
վայրերը բոլոր
գործակցող կապերով համուն
ու կոպեկ կոպեկի վրա
կոփում և նոր հիմքը ամուր
Еркооп-ը:

Տե՛ս, ներսում մարդիկ կան
վորբան—
գնորդ, այցելու.
լեցուն և Еркооп-ը կյանքով
առավոտ, յերեկո:

Անցորդները ահա
կացել են վիտրինի առջև
ու, կարծես, դիտում են նկար,
չե՛, ցուցահանդես:

Տեսե՛ք լի մթերք են դիզվել,
ամբարել բարիքներ ամբալ:
— Հե՛յ, ջանքդ մոտոր և, Դիզել,
ջան՝ պրոյետար:

Այդ ի՞նչ պակաս և դա,
ալ կարմիր գույներ կան, դեմիզ:
Լա՛վ կարդա՛, ընկե՛ր,
հիշի՛ր այդ խոսքերը՝
— Կոռպերացիայով դեպի կոմ-
մունիզմ:

5

Ու հիմա,
թե Սեդրակ աղան,
վոր անգործ ենմում և մայթով
ու անգոր անեծք և կարդում,
պարզ ե՛ ո՛ւմ.
թե դուքանչի Դարչոն
նստած յուր խանութի առջև
միշտ վաչ և տալիս ծեր գլխին,
վոր գնորդ չկա,—
այնտեղ
Еркооп-ում
գրվում ու ցրվում և չեկր,
այնտեղ են հանաչել իրար
բանվորն ու գեղջուկը՝
դարբենի ու ավանդն Իլիչի.
— Смычка...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Դերեր
1. Նրանց, վորոնք իմ յերգերը յերկնեցին	5
2. Հրթիռներ	6
3. Իմ սիրերգը	7
4. Նախորդակ	8
5. Պատավր զատամ	9
6. Արթնացող հսկան	10
7. Հոկտեմբերին	11
8. Վողջուն թոցեղեն	13
9. Կարմիր բանակի յերթը	14
10. Խորհրդային Վրաստանին	15
11. Վոչ փափկասուններին	16
12. Աշխարհը—բեզ բանտ	17
13. Յելի՛ր	18
14. „Յաշարն“	19
15. Դեպի մեռինդ	20
16. Արմենիա	21
17. Կալերում	22
18. Մեր լողունգն—ուսում	23
19. Կառուցում	25
20. Քաղաքի յերգը	27
21. Փողոցը	28
22. Հրչեջները	29
23. Վակգալ	31
24. Еркооп	33



ՀՀ Ազգային գրադարան



NL0355121

41041.